

Ֆ. Գառնիկյան

Հուլի և նամակը «Հայ գրականության» դասերին

Կոսմիկական արագությունների, ահեղ մրցավազքի ու կոսմոպոլիտիզմի այս ահեղ դարում միակ բանական էակի՝ մարդու բարդ հոգեկան աշխարհում հետ է մղվում հուզականը, նրա հուզաթաթախ էությունը վերածվում է ռոբոտի: Մարդը սառչում է դեպի մարդը, նրա հուզաշխարհը, անցյալն ու պատմությունը: Իսկ դա նրա հուշն է: Վտանգավոր է անհուշ մարդը մարդկության պատմության համար հասարակության ստեղծած շատ արժեքների վերափնաստավորման առումով, ինչպես նաև բարոյական պարտքի տեսանկյունից:

Ահա այս տեսանկյունից էլ պետք է մոտենալ գրականության դասին՝ փորձելով աշակերտների և ուսանողների մեջ ներարկել սեր ու հարգանք դեպի ամեն տեսակի հիշատակները՝ ապահովելով դասի հուզական կողմը: Գրականության դասը հետաքրքիր դարձնելու, գրողին մոտիկից ճանաչելու, աշակերտի հուզաշխարհի վրա ներգործելու նպատակով հաճախ են օգտագործում բոլոր ժամանակների մեծերի հուշերն ու ասույթները իրենց ժամանակակիցների մասին, կարդում նաև իրենց նամակները, որտեղ ավելի հեշտ է բացահայտվում գրողի ներաշխարհը, ավելի պարզ է երևում նրա ստեղծագործական լիցքը:

Հուշն ու նամակը օգնում են ուսանողին, ուսուցչին, աշակերտներին ճիշտ, գուցե և բազմակողմանի ճանաչելու գրողին, թափացելու նրա ստեղծագործությունների խորքը, վեր հանելու հիմնական գաղափարները, պարզաբանելու արվեստի ներգործող ուժի հզոր աղբյուրները, հավերժական թեմաներն ու գաղափարները:

Հուշերն օգտագործում են գրողի կենսագրության ուսուցման ժամանակ, նրա ծննդավայրի ծանոթության համար ու գրական ակունքները հետազոտելիս, ստեղծագործությունը վերլուծելիս: Մի առանձին հետաքրքրությամբ են աշակերտները և ուսանողները լսում գրողների կյանքի մանրամասների, նրանց բնավորության գծերի ու սովորույթների մասին: Այդ բոլորը գրողին մոտեցնում են մեզ, դարձնում են մեր ժամանակակիցը: Նրանց տեսնում ենք որպես կենդանի, լիարյուն մարդու, որն իր մեծության փայլի հետ ունի նաև որոշ թերություններ:

Աշակերտներին պատմում են «Զրույցներ Գյոթեի հետ» գրքի հեղինակ Յոհան Պետեր Էքերմանի մասին, որը ինը տարի գրի է առել Գյոթեի մտքերը և բողոքում է, որ քիչ է գրի առել. «Այդ արտակարգ ոգուն և մարդուն ամենայն իրավամբ կարելի է համեմատել բազմամիստ ադամանդի հետ... Ինքս իմ աչքում նմանվում եմ մի երեխայի, որը բռով որսալ է ուզում գարնանային կենսարար անձրևի կաթիլները, որոնց մեծ մասը հոսում է մատների արանքով»:

Գրողների կենսագրությունը ուսումնասիրելիս հանձնարարում են կարդալ հուշեր նրանց մասին, հետո հարցնում են, թե որն էր ամենատպավորիչն ու հետաքրքիրն իրենց կարծիքով, բնավորության որ գծը դուր եկավ, ինչ նորություն բացահայտեցին և այլն: Շատ ժամանակ գրողի կենսագրությունը սկսում են նրա կյանքից որևէ հետաքրքիր դրվագ պատմելով: Այդ նպատակով օգտագործում են նաև գրողի հուշերը և ինքնակենսագրականները: Օրինակ՝ Եղիշե Չարենցի մասին, որը բնորոշում է նրա մեծ սերը դեպի մարդը, կինը, Շիրազի մասին՝ նրա 7-րդ դասարանում ուսուցիչ նշանակվելու և դասարանում աղանձ ուտելու մասին: Նման հետաքրքիր դեպքերն ու պատմություններն ակտիվացնում են դասապրոցեսը, աշխուժացնում աշակերտներին:

Գրողները գրական անուններ և կեղծանուններ ընտրում են անհրաժեշտությունից դրդված, շատ անգամ էլ՝ մկրտության ավագանով անցնելիս:

Եղիշե Չարենցի գրական անունը բացատրելիս բերում են Կ. Քոթանջյանի, Վիվանի և Սահարու հուշերը, բերում են նաև Վ. Սարյանի խոսքերը. «Եղիշե Սողոմոնյան էր անունը: Տեղ մը ճամփուն վրա մեկ կողմ դրավ Սողոմոնյանը և իր աճող ինքնության վրա զետեղեց Չարենց ընտրյալ անունը: Ինչ կնշանակեր: Իբր՝ ձևով մը կնշանակե խռովարար, և ոչ անպայման գեշ. - «Ենցը» պատկանելիություն կցուցանե: Խռովքին մարդը»: Նման ձևով բացատրում են Ռաֆֆի, Դուրյան, Շիրվանզադե, Շիրազ, Սևակ անունների ծագումը:

Որպեսզի գրողին չմոտենանք որպես հեռավոր օրերի ծանոթ բարեկամի, որպեսզի նա մեզ մոտ ու հարազատ լինի, կանգ են առնում նաև գրողների արտաքին նկարագրությունների վրա, որոնցից շատ հաճախ բխեցնում ենք նրանց բնավորության գծերը, երբեմն էլ ստեղծագործական որոշ տարրեր:

Պ. Դուրյանը և Մ. Մեծարենցը գեղեցիկ արտաքին են ունեցել: Դուրյանի արտաքինը «Գեղեցկատեսիլ, վեհ ու վես մի պատանի էր Պետրոսը, և ցնցոտիների մեջ, բայց գեղեցիկ արտաքինով ու բովանդակալից ներքինով»:

«Հելլեն դասական ձուլվածք մը՝ հայեցի արտահայտություններով, իր դեմքի՝ ողորկ կիսափայլ մորթով մը քողքված»: Մեծարենցի մասին է:

Նրանց պոեզիան էլ նուրբ ու գեղեցիկ է:

Գրողների բնավորության շատ գծեր ունեն դաստիարակության նպատակություն, օրինակ՝ Ռաֆֆին, Շիրվանզադեն, Սևակը ունեցել են առասպելական աշխատասիրություն: Ռաֆֆին միջին հաշվով աշխատել է 16 ժամ, Շիրվանզադեն նախադասություն կամ էջը փոփոխում էր և արտագրում այնքան, որ ստացվում էր իր ուզածը: Սևակը մեծ հակում ուներ բառարանների հանդեպ, Թումանյանը եղել է մեծ հյուրասեր, արտակարգ բարի սրտի տեր մարդ ու մեծ հայրենասեր, Նար Դոսը՝ վերին

աստիճանի համեստ, Ռաֆֆին անողոք ու քինախնդիր՝ թշնամիների հանդեպ, Շիրվանզադեն՝ ժլատ գովեստների մեջ կային:

Բնավորության գծերի մասին խոսելիս ասում են, որ հոգեբանները գույների և կենդանիների նկատմամբ ունեցած վերաբերմունքով բնորոշում են մարդուն, նրա բնավորության առանձին գծեր: Շատ հաճախ էլ գրողի բնավորությունը դրսևորվում է նրա ստեղծագործություններում: Ստեղծագործության վերլուծության ժամանակ նման դեպքերում կանգ են առնում, առանձնացնում, ընդգծում նմանությունը: Օրինակ՝ Չարենցը հեղափոխության բանաստեղծ է. եղել է շատ բռնկուն ու պոռթկուն, սիրել կարմիր գույնը. միայն «Ամբոխները ծելագարված» պոեմում «կարմիր բառն գործածել է 23 անգամ՝ չհաշված նրա հոմանիշները՝ կրակե, հրե, բոսոր, արնագույն: Պոեմի ուսումնասիրության ժամանակ հանձնարարում են պոեմից դուրս գրել «կարմիր» բառով ու նրա հոմանիշներով կազմված բառակապակցությունները, նախադասությունները, պատկերները, նաև իրենց դուր եկած հատվածները:

Շիրվանզադեի աշխատաիրության մասին խոսելիս անմիջապես հիշում ենք Ռաֆֆու մասին, բերում անցած հատվածը և կարդում:

Մեծարենցը եղել է թախծոտ, մեղմ ու հանգիստ, սիրել սպիտակ ու կապույտ գույները: Նրա ստեղծագործության ուսումնասիրության ժամանակ առանձնացնում ենք հոմանիշների հետևյալ շարքերը:

1. սպիտակ - արծաթ - կաթե - ծյունե - ճերմակ
2. կապույտ - բիլ

Հուշերն ավելի շատ օգտագործում են /դա լինում է պատմելու ձևով/ ստեղծագործության վերլուծության ժամանակ, որոնք պարզաբանում են երկի ստեղծագործական պատմությունը, նրա գրական ակունքները, իրականի ու գեղարվեստականի փոխհարաբերությունը:

Երկի ստեղծագործական պատմությունը կարևոր է նրա գաղափարական բովանդակությունը հասկանալու համար, որովհետև աշակերտի առաջ ներկայանում է գրողի նպատակը: Օրինակ՝ Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա-Մահարի» պոեմի ստեղծագործական պատմությունը ներկայացվում է Իսահակյանի հուշերով. «Ես նոր էի բանտից ազատվել: Իմ ընկերը շոգեքարշի մեքենավար էր, առաջարկեց նստել իր կողքին: Երբ անցնում էինք Շիրակի դաշտավայրը, ինձ թվաց, թե ուղտի վրա նստած գնում են դեպի արևը՝ Սահարայի անձայր անապատով: Սկսեցի խորհել, թե ինչ լավ կլիներ փախչել տիրող կարգերից, մարդկանց որոգայթներից, քաղաքի ժխորից: Եվ այստեղ ծնունդ առավ այդ պոեմը գրելու իմ ցանկությունը»: Կարդում ենք այն հուշը, որը պատմում է Տերյանի խորհրդի մասին պոեմի սկզբի վերաբերյալ, բերում

Հ. Հակոբյանի և Ավ. Իսահակյանի իրականությունից դժգոհ լինելու վերաբերյալ պատկերը: Նման ձևով բերում են Շիրվանզադեի «Քաոս», Պ. Սևակի «Անլռելի զանգակատուն», Դեմիրճյանի «Վարդանանք» երկերի ստեղծագործական պատմությունները:

Գրողի ստեղծագործական աղբյուրները պարզաբանելիս առաջին պլանի վրա ենք դնում բնությունը որպես ներշնչարան: Այդ բնությունն ու երկիրն է սնել ու կրթել նրան, այդ ժողովուրդն է իր իմաստությունները սովորեցրել նրան: Նախօրոք հանձնարարություն ստացողը կարդում է ուսումնասիրվող գրողի ծննդավայրի նկարագրությունները հուշերից: Օրինակ՝ Ավ. Իսահակյանը հիշում է, որ նահապետական, դյուցազնական Լոռին եղել է Օհաննեսի Ներշնչարանը, Գանձայի քնարական երեկոները՝ Վ. Տերյանի:

Բրզինքը իր՝ Վարուժանի հուշերում ես համակ բանաստեղծություն է:

Աշակերտների գիտելիքներն ամրապնդելու, բնության նկատմամբ սիրո դաստիարակության նպատակով որոշ աշակերտները ստանում են լրացուցիչ առաջադրանք կազմել Գանձայի, Շիրակի, Լոռու, Ջանգեզուրի բնության պատկերասրահ. չէ՞ որ «Գրողին լավ ճանաչելու համար պետք է նրա հայրենիքում» /Գյոթե/: Օրինակ՝ Ա. Բակունցի ստեղծագործություններից դուրս են գրում Ջանգեզուրի կենդանական ու բուսական աշխարհների. դա փորի մաշկը դեղին խլեզների ու անտառների ոսկեփետուր թռչունի՝ միրհավի, կոշտ կերած ձիերի ու եզների, գիժ մոզիների ու ագռավների երկրի, Օրանջիայի ձորակում ամեն գարնան ծաղկող մասրենու դեղին, սպիտակ վարդերի, կաքավաբերդի բարձունքի միակ ծաղկի ցողոնը կաքավի ոտքի պես կարմիր, ծաղիկը՝ ծիրանի գույնը ալպիական մանուշակի, կապույտ ծաղիկներով կտավատի ու դեղին ծիրանու հարուստ երկիրն է:

Հուզիչ է նաև գրողների կյանքի վերջին օրերի, ժամերի նկարագրության ընթերցումը: Օրինակ՝ Դուրյանի, Րաֆֆու, Թումանյանի: Ահա այսպիսին է արևմտահայ վաղամեռիկ բանաստեղծ Պ. Դուրյանի կյանքի վերջին պահի նկարագրությունը: «Առտվան մոտ հորեղբայրը կուզա: Ներս մտած ատեն, դռան ճռնչյունեն, Պետրոս գլուխը, այն կողմ կդարձնե ու ծուռ, արդեն պաղած նայվածքով մը, կյանքի ներս մտնողին: Չի ճանչնար զայն: Հորեղբայրը կուզա քովը կնստի: Պետրոս, միշտ անձայն, նորեն կնայի անոր, այս անգամ զայն կճանչնա ու կժպտի:

Աչքերը կփակվին: Գլուխը, զոր հորեղբայրը եկած ատեն քիչ մը վեր առած էր, բարձին վրա կիյնա: Ալ կատարելապես սպառած, կըսե իր վերջին «մնաք բարով» ձեռքը երեք անգամ ճակատին տանելով հանդարտորեն: Երրորդ հեղուն՝ ձեռքն օդին մեջ առկախ կմնա»:

Ինչքան հարուստ է գրողի կենսափորձը, նրա տեսածն ու լսածը, կարդացածը, այնքան հարուստ է գրողի ստեղծագործությունը, հարուստ իր բովանդակությամբ: Դրա վառ վկայությունն է նաև այն, որ մեծ է այն գրողը, որ կարողանում է բարձրաձայն խոսել իր «եսի» մասին, իսկ աշխարհը կարողանում է լսել, որ կարողանում է իր «եսով» արտահայտել համամարդկային զգացմունքները, կարողանում է իրական փաստը հասցնել գեղարվեստականի աստիճանի: Բոլորիս լավ հայտնի են Ավ. Իսահակյանի, Ե. Չարենցի, Վ. Տերյանի սիրո պատմությունները՝ կապված Շուշիկ ու Աստղիկ Մատակյանների, Աստղիկ Ղոնդախջյանի, Կարինե Քոթանջյանի, Արփենիկ Աստվածատրյանի, Սուսաննա Պախլովայի հետ: Այս դեպքում օգտագործում ենք գրողների նամակները: Նամակներն արդեն ներկայացնում են գրողին անմիջականորեն:

Վ. Տերյանի սիրո պոեզիան ներկայացնում ենք որպես երազային, ռոմանտիկ, պլատոնական սիրո արտահայտություն: Աշակերտներին հանձնարարում են կարդալ նշված նամակները, որոնք բացահայտում են գրողի հոգեկան հարուստ աշխարհը, նրա հոգու տվյալանքները, հիասթափությունները: Օրինակ՝ Օնիկ Օհանջյանին 1907 գրած նամակը գրում է. «Ես շատ եմ խորհել և ի վերջո եկել եմ այն եզրակացության, որ միայն կինը կարող է լինել այդպիսի մարմին ընկեր, բայց, իհարկե, ոչ քաղքենի-կնիկը, այլ կին-մարդը, խելացի կինը, կին-ընկերը:

Քնքուշ երազով պատճուճիր հոգիս,
Նստիր մահճիս մոտ ու տխուր երգիր,
Մազերդ փոխիր հոգատանջ կրծքիս
Ու մեղմ փայփայիր սիրտս տարագիր:

Եվ գիտությունը քո
քրոջական
Սիրտս կլցնե խնդության
լույսով...

Ավ. Իսահակյանի սիրո երկերում ևս հանդիպում է վերերկայնությունը: Կարողանում են Արիստակես Տետերյանին 1905թ. գրած նամակը. «Իմ սերն այս աշխարհից չէ, նրա մեջ ֆիզիոլոգիա չկա և իմ հոգին ձգտում է դեպի նրա հոգին՝ ինչպես արտույտը դեպի արևը... Ո՞վ է Աննիկը... նա իմ ստեղծագործությունն է, իմ հոգեկան աշխարհը, իմ երազների բանաստեղծական սֆինքսը»: Կարդում ենք նրա գեղարվեստական արտահայտությունը.

Ախ, հեռվից հեռու թող ունի իջած
Նայեմ վառ դեմքիդ չքնաղ, լուսազգամ,
Դու այնպես սիրուն,- վարդաբույր գարուն,
Եվ աչքերիդ մեջ կյանքն է շողշողում:

Կամ մեկ այլ նամակ. «Իմ նպատակը հավիտենական սիրո մեջ է, որից ինձ ոչ ոք չի կարող զրկել, նա կապրի իմ գերեզմանից հետո էլ դեռ, իմ անմահ ատոմների մեջ»:

Այսպիսով՝ հուշը և նամակը կենդանություն են հաղորդում գրականության դասին՝ դառնալով նրա կարևոր ու բաղկացուցիչ մասը: Այս ամենի վերջին ակորդն է կազմում միջոցառումը, որը կարելի է կազմակերպել հուշերի ու նամակների միջոցով:

Յուրաքանչյուր գրականության ուսուցիչ պետք է պատգամ դառնա Վ. Սարոյանի «Ես իմ անուշ Հայաստանին» նվիրված տողերը:

«Լացն ամեն անգամ բռնել է իմ կոկորդը, որ քո հայոց լեզուն այդպես հստակորեն հանդիսավոր է, այդ քարոտ-քարքարոտ երկրի խոսքի առջև քո ծանրադիր վերաբերմունքի համար, պատմության քառուղիներում մեր փոքր երկրի ոտնատակության վրա քո զայրույթի, բռնագաղթված ժողովրդիդ ճակատագրին այդպես չհանդուրժող քո ցասումիդ համար»:

- Հոդվածը նվիրված է գրականության դասավանդման հարցերին, ուր շարադրված են գրականության դասերին հուշի և նամակի օգտագործման հնարները և մեթոդները: Գրողների հուշերի ու նամակների հիման վրա բացահայտվում են նրանց բնավորության գծերը, նախասիրությունները, որոշ երկերի ստեղծման պատմությունը:

Հոդվածը կարող է օգտակար լինել ուսանողներին, ուսուցիչներին և բոլոր նրանց, ոքեր զբաղվում են գրականության դասավանդման մեթոդիկայի հարցերով:

- հՅՈՅՖ՝ տՏրՉ՝ քպվՈ ՉՏտՐՏրՈՎ տՐպտՏՊՈՉՈվՈ՛ սՈՅպՐՈՅցՐօ, չսպ ՌջսՏՁպվօ ըտՏրՏոօ Ռ ՎպՅՏՊօ ՌրտՏսՖջՏՉՈվՈ՛ ՎպՎցՈՐՏՉ Ռ տՈրպՎ վՈ ցՐՏՍՈւ սՈՅպՐՈՅցՐօ. ծՈ ՏրվՏՉպ ՎպՎցՈՐՏՉ Ռ տՈրպՎ տՈրՈՅպսպռ ՐՈրՍՐօՉՈ՛Յր՝ փպՐՅօ Ռւ լՈՐՈՍՅպՐՈ, տՐպՊտՏփՅպվՈ՛, ՈրՅՏՐՈ՛ ըՏջսՈվՈ՛ վպՍՏՏՐօւ տՐՏՈջՉպՊպվՈռ.

հՅՈՅՖ՝ ՎՏՁպՅ ոօՅՖ տՏսպջվՏռ ըՅցՊպվՅՈՎ, ցփՈՅպս՛Վ Ռ ՉրպՎ ՑպՎ, ՍՅՏ ջՈվՈՎՈպՅր՝ ՉՏտՐՏրՈՎՈ՛ ՎպՅՏՊՏՉ տՐպտՏՊՈՉՈվՈ՛ սՈՅպՐՈՅցՐօ.

ԸԿՃ, տՐԱԿՏՊՈՉՈՑԱԿՖ
ՀԳՎՈՎՈՑՈՐՎՏՀՏ ԻՈՍԳԱՖՑԱՅՈ,
ՊՏՓԱՎՑ ԸԿՃ
ԹՈՐՎՈՄՎ ԴԱՎՎ՝ ԹՈՐՈՋՊՈՑՏՉՎՈ

- The article is devoted to the teaching questions of literature, where are expounded the ways and the methods of the memory and the letter use of the literature lessons. On the base of the writers' memories and letters appearing their characters, preferences, and the history of some writings.

The article can be useful for students, teachers and all them who are busy with the questions of methods of teaching literature.

A Lecturer of Humanitarian Department of
Armenia Open University
Assistant Professor of A.O.U.
Garnikyan Fenya

Գրականություն

1. Էդ. Ջրբաշյան «Գրականության տեսություն» Երևան, 1977թ.
2. Ա. Տեր-Գրիգորյան «Ընթերցանության մեթոդիկա» Երևան, 1978թ.
3. Էդ. Ջրբաշյան «Թունանյանի պոեմները» Երևան, 1986թ.
4. «Եղիշե Չարենցը ժամանակակիցների հուշերում» Երևան, 1980թ.